***Աշխատանքի ծածկագիր 1953***

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 19.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա.Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ.Աբգարյանի
Ա.Վարդանյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են տարբերակ 3-ի **քրեական դատավարություն բաժնի** 9-րդ, 10-րդ, 11-րդ, 16-րդ 18-րդ, 28-րդ և 34-րդ հարցերը:

**Հարց 9**

Վիճարկման արդյունքում գնահատականը բարձրացվում է 1 միավորով, քանի որ խնդիրը հստակ ձևակերպված չէ, կարող են որպես ճիշտ պատասխան դիտարկվել նաև այլ տարբերակները: Բողոքում հավակնորդի ներկայացրած հիմնավորումները Հանձնաժողովի կողմից դիտարկվել են ողջամիտ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության և խնդրի ձևակերպումների ոչ միանշանակությունը:

**Հարց 10**

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, առաջադրանքի թեստային պատասխաններից Հավակնորդը պետք է ընտրեր այն միակը, որն առավել համակողմանիորեն և սպառիչ կերպով բովանդակում էր խնդրի ճիշտ լուծումը: Ներկայացված խնդրում դա տարբերակ «գ»-ն է:

**Հարց 11**

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի հիմնավորումները հակասում են ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշմանը: Դատարանը պարտավոր էր ձեռնարկել անհրաժեշտ և հնարավոր բոլոր միջոցները վկայի ներկայությունը և հարցաքննությունը դատարանում ապահովելու ուղղությամբ և հրապարակել նախաքննական ցուցմունքը միայն չներկայանալու օբյեկտիվ պատճառների առկայության պարագայում, օրինակ՝ նրա վրա ամբաստանյալի անօրինական ներազդեցություն գործելու կամ սպառնալիքների վերաբերյալ փաստական տվյալների առկայության, մահվան դեպքում և այլն: Ավելին, խնդրի փաստական տվյալներից չի բխում, որ վկայի ցուցմունքը եղել է միակը կամ վճռորոշը, որի վրա հիմնվելով էլ՝ Հավակնորդը ներկայացրել է իր բողոքը:

**Հարց 16**

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, առաջադրանքի թեստային պատասխաններից Հավակնորդը պետք է ընտրեր միակ ճիշտ «ա» տարբերակը, որը բխում է Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներից: Հավակնորդի առարկությունն ու պատճառաբանությունները չեն բխում խնդրում առաջադրված փաստական տվյալներից:

**Հարց 18**

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի պատասխանն ուղղակիորեն հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի կարգավորմանը:

**Հարց 28**

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ քաղաքացիական հայցը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն, լուծվում է բացառապես դատավճռով: Տվյալ դեպքում հանցագործության այն դրվագով, որի շրջանակներում քաղաքացիական պատասխանող-ամբաստանյալի դեմ ներկայացվել էր քաղաքացիական հայց, քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով, որի պայմաններում առաջին ատյանի դատարանը իրավաչափորեն քաղ. հայցը թողել է առանց քննության:

**Հարց 34**

Հավակնորդի հիմնավորումները հակասում են ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշմանը, ավելին՝ նման մոտեցման դեպքում գործը կհայտնվի անդադար շրջապտույտի մեջ՝ հանգեցնելով ողջամիտ ժամկետներում գործը քննելու իրավունքի խախտման:

# Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 1953 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 9-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝** Լ.ԱԲԳԱՐՅԱՆ

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ